2004

№ 2

1372-ԱԿ

# ՍԱՀՄԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅՆ

Որ եղև յամի տն 1826 'ի մարտի 4, 'ի Պ͞տրիարգարանս ամենայն հայոց որ 'ի Կոստանդնուպօլիս:

Հրամանաւ ամենապատիւ և վեհափառ Պ͞տրիարգի այսմ քաղաքի Տ͞ն Կարապետի ս͞րզն արք Եպ͞սի կոստանդնուպօլսեցւոյ:

Յաղագս բարեկարգութ͞ե արք Եպիսկոպոսական և Եպիսկոպոսական աթոռոց, և համօրէն ժառանգաւորաց եկեղեցւոյ:

3807-57

ՏՊԱԳՐԵԱԼ

Յամի տն 1826 'ի մարտի 11

'Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՅՕՐԹԱԳԵՕՂ:

281.6

* Մինչ դեռ ընթերցասիրաց մխիթարութե վարդապետութե՝ մի՛ անփոյթ առնէք զշնորհացդ որ ՚ի ձեզ են, որ տուաւ ձեզ մարգարէութե ՚ի ձեռնադրութե երիցութե ։ Զա՛յդ խորհեաց՝ և ՚ի դո՛յն կանխեսջիք ․ զի ձեր յառաջադիմութի ամե՛ն յայտնի լիցի ։ Զգո՛յշ լերուք անձինց և վարդապետութեդ՝ և ՚ի դմին յամեսջիք ․ զայդ ձեր առնելով՝ և՛ զանձինս ապրեցուցջիք, և՛ զայնոսիկ որ ձեզն լսեն ॥ ։ ա ․ Տիմոթ ․ դ ․ 13 ։

Աշխարհք երկրի՝ որք ունին զիրաւաբանութիւն ՚ի վերայ հպատակաց իւրեանց, ՚ի տեսանել զօրինազանցութիւն ինչ կամ զանկարգութիւն ՚ի նոսա, փութան սահմանեն կանոնս բարիս ըստ ժամանակին յարմարութեան՝ առ ՚ի բարեկարգել զնոսա և ուղղել։

Ըստ սմին սարասի և նախագահք եկեղեցւոյ սրբազան հայրապետք՝ ընդ ժամանակս ժամանակս ՚ի մի գումարեալ, կանոնս օգտակարս սահմանեցին ՚ի շինութիւն եկեղեցւոյ՝ ըստ հանգամանաց և պիտոյից իւրաքանչիւր ժամանակի. որպէս յայտ է ՚ի գործոց Տիեզերական՝ Ազգային՝ և Թեմական ժողովոց։

Զորս և մեք օրինակ և նախաշաւիղ առաջի ունելով, յառաջ քան զաւուրս զայսոսիկ՝ յամի տեառն 1824 ՚ի յուլիսի 1, ժողովարարեալ ՚ի Պատրիարգարանի աստ, զառ ՚ի նախնեաց աւանդեալ սահմանադրութիւն հրատարակեցաք անդրէն ՚ի հաստատութիւն բարեկարգութեան. յաւելեալ ինչ ինչ և ՚ի բարձումն անկարգութեանց, որք տակաւ տակաւ մտեալ էին ՚ի ժողովուրդս մեր, մանաւանդ ՚ի վարժապետս ոմանս և ՚ի դաստիարակս մանկանց։ Որպէս է տեսանել ՚ի կանոնական Կոնդակի մերում տպագրեալ ՚ի նմին ամի ՚ի յունիսի 5. զոր և առաքեցաք առ ամենայն առաջնորդս անյապաղ ՚ի գործ դնել։

Իսկ այժմ տեսանելով զպէսպէս անկար-

գութիւն յոմանս ժառանգաւորս եկեղեցւոյ, որք հետզհետէ սպրդեալ մտին 'ի նոսա, և լսելով անդադար զտրտունջ և զբրթմնջիւն ազգին՝ որք գայթակղեալ ընդ տարադէպ գնացս նոցա՝ բազմօք թախանձէին զմեզ փոյթ տանիլ ուղղութեան նոցին, պարտ վարկաք միաբան խորհրդով և հաւանութեամբ բարեջան հովուաց եկեղեցւոյ կանոնաւորել զնոսա և ուղղել։ Զի ըստ առածին իմաստնոց, ‖ Օրէնք կամ բարեկարգութիւնք որք վերաբերին առ հասարակութիւն, հասարակաց հաւանութեամբ պարտին հաստատիլ ‖ ։

Յայն սակս կամօք և հաճութեամբ ազնուամեծար իշխանաց ազգիս, 'ի գերապատիւ արքեպիսկոպոսաց՝ 'ի բարձրապատիւ եպիսկոպոսաց՝ 'ի մեծապատիւ քարոզչաց՝ և 'ի պատուական քահանայից՝ ժողով արարեալ 'ի Պատրիարգարանի աստ 'ի կոստանդնուպօլիս՝ յամի տեառն 1826 և 'ի մարտի 4, բազում քննութեամբ և անաչառ դատողութեամբ սահմանեցաք կանոնս կարևորս նկատմամբ պարագայից ժամանակիս՝ 'ի բարեկարգութիւն ժառանգաւորաց եկեղեցւոյ։ Զոր ստորագրութեամբ և կնքով ժողովելոց հաստատեալ՝ աւանիկ առաքեցաք առ գերապատիւ և գահերէց արքեպիսկոպոսունս, և նոքօք առ բարձրապատիւ և աթոռաժառանգ եպիսկոպոսունս, և առ մեծապատիւ և ծայրագոյն վարդապետս առաջնորդս։

Կանոն. ա: Առժամն թուեցաւ աստուածախումբ ժողովոյս չափաւորել զբազմութիւն արք եպիսկոպոսարանաց. և միայն տասն արք եպիսկոպոսարանս, և երեքտասան եպիսկոպոսարանս յառաջացուցանել յայն ամենայն գաւառս և՛ի վիճակս՝ որք են ընդ դերագոյն իշխանութեամբ Պատրիարգական աթոռոյն կոստանդնուպօլսոյ՝ ըստ այսմ օրինակի:

Առաջին արք եպիսկոպոսարան Տարօնոյ. որոյ աթոռ է մենաստանն մշու սուրբ Կարապետի. ընդ որով է վերին և վարին Քեղի. Առաքելոց վանք, Մատրավանք, և սուրբ Յովհաննէս. իսկ եպիսկոպոսարան՝ Բաղէշ. ընդ որով է վանքն Ամրտօլոյ:

Երկրորդ արք եպիսկոպոսարան Կեսարիոյ. որոյ աթոռ է մենաստանն սուրբ Կարապետի. ընդ որով են վանորայքն սուրբ Դանիէլի, սուրբ Սարգսի, և սուրբ Աստուածածնին Թոմարզայու:

Երրորդ արք եպիսկոպոսարան Նիկոմիդեայ. որոյ աթոռ է մենաստանն կոչեցեալ Չարխափան սուրբ Աստուածածին. իսկ եպիսկոպոսարան՝ Պրուսա, և Պանտրմա, և Կուտինա:

Չորրորդ արք եպիսկոպոսարան Սեբաստիոյ, որոյ աթոռ է մենաստանն սուրբ Նշան. իսկ եպիսկոպոսարան՝ Արապկեր, ընդ որով է Դուրուչայ:

Հինգերորդ արք եպիսկոպոսարան Կարնոյ. որոյ աթոռ է մենաստանն կոչեցեալ Մարկու վանք. ընդ որով են Կարմիր վանք, և Խաչկայ վանք. Սպեր, Երզնկայ, Դերջան, Բաբերդ. իսկ

եպսարան՝ վերին և վարին Բասէն · և միւս ևս՝ Տրապիզոն , ընդ որում է Կիւմիւշխանայ ·

Վեցերորդ արք եպսարան Գաղատիոյ · որոյ աթոռ է մենաստանն սբ Ածածին ։

Եօթներորդ արք եպսարան Տիգրանակերտի · որոյ աթոռ է մենաստանն՝ Բարձրահայեաց սբ Ածածին · իսկ եպսարան՝ Ուռհայ , հանդերձ վանորէիւքն Խարբերդու , որք կոչին Խուլէվանք , Գառնէմ , Սորսոր , Ապոլմեհ , ևս և Շնքուշ · և միւս եպսարան՝ Բալու ։

Ութերորդ արք եպսարան Եւդոկիոյ · որոյ աթոռ է մենաստանն սբ Աննա · իսկ եպսարան՝ Շէպին ղարահիսար , ընդ որում է Թամզարայ , և վանքն Ածպատերի ։

Իններորդ արք եպսարան Ամասիոյ · որոյ աթոռ է մենաստանն սբ Ածածին · իսկ եպսարան՝ Կամախ , որ է վիճակ սբ Լուսաւորչի ժանուին նեպուհոյ ։

Տասներորդ արք եպսարան Վանայ · որոյ աթոռ է Վարագայ սբ Նշան · ընդ որում են վանորայքն Նարեկայ , Տէր յուսկան որդւոյ , Սալնապատու , Կռնկու , և այլն · ևս և՝ երկոքին անապատք՝ Լիմ և Կտուց ։

Բաց 'ի տասանց աստի արք եպսական աթոռոց՝ և յերեքտասան եպսարանաց , երկու Նախաթոռ եպսարան յաւելցեալ եղև Պատրիարքական աթոռոյն Կոստանդնուպօլսոյ , և

են սոքին. առաջինն Անդրիանուպօլսոյ, և երկրորդն Թէքիրտաղու. Քանզի արժան համարեցաւ ա̄ծախումբ ժողովս, զի և աթոռն Պ̄տրիարգական ըստ օրինակի այլոց արք եպ̄սարանաց ունիցի զեպ̄սարանս, որք անմիջապէս կախեալ իցեն զնմանէ. և եպ̄ք նոցին 'ի շնորհս Պատրիարգական աթոռոյն իցեն Նախապատիւ 'ի մէջ աթոռաժառանգ եպ̄սաց, որք են ընդ կառավարութ̄բ այլոց գահերէց արք եպիսկոպոսաց.

Կանոն. Է. Պ̄րտ և արժան է գերապատիւ և գահերէց արք եպ̄սաց՝ յիւրաքանչիւր ամի քննել և խնամել զթիւ և զհամար վարդապետաց՝ աբեղայից՝ և կուսակրօն սարկաւագաց, ո̄չ զիւրեանց սեպհական վիճակաց՝ նոյնպէս և զեպ̄սարանաց որք են ընդ աթոռովն իւրեանց.

Նաև զանուանս նոցա, և զհասակ, և զուսումն՝ թէ զինչ և ուր իցեն ուսեալ, և զերկիր ծննդեան նց̄, և զկարգ՝ կամ զաստիճան՝ թէ ուր կամ յումմէ իցեն առեալ, մի ըստ միոջէ գրել 'ի դպրութ̄ արք եպ̄սարանի իւրեանց, և զօրինակ նոցին առաքել 'ի Պատրիարգարանս ամի ամի 'ի սկիզբն յունվար ամսոյ, զի արձանագրեսցի 'ի դիւանի անդ.

Կանոն. Ը. Կարեւոր թուեցաւ ժողովոյս, զի ո̄չ չափ և թիւ կարգեցաւ արք եպ̄սական աթոռոց և եպ̄սարանաց, նոյնպէս չափ և թիւ

կարգեսցի վարդապետաց աբեղայից՝ և սար-
կաւագաց նոցին՝ ըստ պիտոյից իւրաքանչիւ-
րոց. զոր քաջ քննութեամբ տեղեկացեալ՝ նշանա-
կեսցուք աստէն միայն զորս եպսարանաց։

ա. Աթոռն տարօնոյ ունիցի 20 աբեղայս, և 4 սարկաւագ։

բ. Աթոռն կեսարիոյ, 8 աբեղայ, և 2 սրկւգ։

գ. Աթոռն նիկոմիդեայ, 8 աբեղայ, և 2 սրկւգ։

դ. Աթոռն սեբաստիոյ, 4 աբեղայ, և 2 սրկւգ։

ե. Աթոռն կարնոյ, 4 աբեղայ, և 2 սարկւգ։

զ. Աթոռն գաղատիոյ, 4 աբեղայ, և 2 սրկւգ։

է. Աթոռն տիգրանակերտի, 6 աբեղայ, և 2 սարկաւագ։

ը. Աթոռն եւդոկիոյ, 3 աբեղայ, և 1 սրկւգ։

թ. Աթոռն ամասիոյ, 2 աբեղայ, և 1 սարկւգ։

ժ. Աթոռն վանայ, 4 աբեղայ, և 2 սարկւգ։

Այսքէն յանձն առնեմք զերապատիւ և
գահերէց արք եպսաց՝ ըստ այսմ յարմարութեն
չափ ունել աբեղայից և սարկաւագաց իւրա-
քանչիւր եպսարանաց և վանորէից՝ որք յառ-
կայան աթոռոյ իւրեանց. զի նոքա լաւ եւս
կարեն գիտել՝ թէ քանի անձինք հարկաւոր
են նոցին։ Միայն 'ի դէպ վարկանիմք նշա-
նակել զթիւ կրօնաւորաց երկուց հռչակա-
ւոր անապատացս, որք են Լիմ և Կտուց։

Այս երկոքին անապատք ուրոյն ուրոյն
ունիցին 15 կրօնաւոր քահանայ առանց վար-
դապետական գաւազանի, 4 սրկւգ, և 6 պէ

մաւոր, որք կրեսցեն 'ի գլուխս իւրեանց ըղձեալ գտակն անապատականաց ։ Իսկ եթէ պէտք ինչ իցեն, յաւելցին սքեմաւորք 'ի սաղմոսերգութ̅ե և 'ի ժամասացութ̅ե, այլ ո՛չ բնաւ քահանայ կամ սարկաւագ ։ Նոյնպէս և վանահարք նոցա պարտին լինել միշտ կրօնաւոր քահանայ՝ և ո՛չ երբէք եպ̅ս, ըստ հարցն ս̅րց կանոնաց ։ Այս սահմանադրութիւն վանահարց և սքեմաւորաց՝ պահեսցի անշուշտ և յայլ ա̅մ անապատս ազգիս, որք կան յայլ և այլ կողմանս և 'ի թեմս ։

Աստանօր 'ի նշանակել մեր զթիւս կրօնաւոր քահանայից և սարկաւագաց, ո՛չ պարտաւորեմք զգերապատիւ և զգահերէց արք եպիսկոպոսունս, կամ զյարգոյապատիւ վանահարս անապատաց, հարկաւ պահել զայսչափ թուով անձինս ․ այլ կանոնադրեմք աւելի քան զոր նշանակեցաք չպահել, թէ և ունիցին բաւականութիւն պահելոյ ։

Իսկ եթէ այժմ աւելի իցեն ուրեք, հաճեալ եմք շահել զն̅ս սիրով մինչև չափաւորեսցին ։ Նաև եթէ պակաս իցեն, ո՛չ ստիպեմք յաւելուլ, եթէ ո՛չ ունիցին պէտս աբեղայի կամ սարկաւագի, և կամ չիցեն բաւական 'ի լնուլ զպէտս նոցա ։

Կանոն ․ Դ̅ ։ Որք եպ̅սք՝ կամ եպ̅սունք՝ միայն 'ի սեպհական վիճակս իւրեանց հրամանաւ արք. եպ̅սոյ արասցեն ձեռնադրութ̅ի ․

և այն՝ բազում զգուշութե̄ և աչալրջութե̄ . քննելով զհաւատոյն ուղղափառութի̄ , զվարուցն անարատութի̄ , զհաճոյականն քաղաքավարութի̄ , և զկարևորացն գիտութիւն , նկատելով միանգամայն և 'ի հասակին չափաւորութիւն , չլինել մանուկ տիովք . զի մի՛ դուցէ առ ժամանակ մի ընդ քի̄ խայտացեալ , ապա 'ի դատաստանս սատանայի անկանիցի , ըստ առաքելական բանի : Եւ մի՛ և ոչ վասն արեան մերձաւորութե̄ , կամ առ հաճուկս ուրուք , և կամ 'ի սակս օգտի՝ կոչեսցեն զանարժանս 'ի քահանայութե̄ կամ 'ի սարկաւագութե̄ . զի մի՛ լինիցին հաղորդ մեղաց օտարաց :

Կանոն . Ե : Առաջնորդ որք՝ եթէ չիցէ եպս̄ , և պէտս ունիցի քահանայի կամ սարկաւագի , մի՛ զորոշեալն 'ի պաշտօն կամ 'ի սպասաւորութի̄՝ մատուսցէ առ այլ որք եպս̄ առնուլ զձեռնադրութի̄ , թէև եպս̄ն այն իցէ նուիրակ սբ̄յ էջմիածնի՝ կամ սբ̄յ եր̄մի . այլ վկայական գրով առաքեսցէ առ այլք եպս̄ գաւառին , կամ հրամանաւ նորին առ մի յաթոռաժառանգ եպս̄աց ձեռնադրիլ 'ի նմանէ : Եւ մի՛ որք զարծաթ 'ի կիր արկցէ առնուլ զձեռնադրութիւն . այլ ձրի տացի յամ̄ տեղիս և յամ̄ ժամանակի :

Կանոն . Զ̄ : Եպս̄ունք՝ առ 'ի պէտս եպս̄արանաց մի՛ ձեռնադրեսցեն կուսակրօն քահանայ զայն՝ որ չէ ուսեալ գո՛նէ զարհեստն

քերականութեան ։ Զի այնպիսին հաստատեալ է 'ի միտս առնուլ և զգաւազան վարդապետական ․ և զիա՞րդ կարիցէ յայնժամ քարոզել յեկեղեցւոջ զբանն կենաց , մինչ ինքն ոչ կարէ քաջ իմանալ զմիտս աստուածային գրոց ։

Կանոն ․ Է ։ Առաջնորդք վանօրէից՝ եթէ պաշտօնէի պէտս ունիցին 'ի կատարել զժամերգութիւնս , զայն որ գիտիցէ ուղիղ ընթեռնուլ՝ և շարական ասել , օրհնեսցեն զնա պքեմաւոր վանականն՝ առանց ձեռնադրել տալոյ քահանայ կամ սարկաւագ ․ Զի ահա բազումք 'ի վանօրէից են իբրև զանապատս միանձանց ․ որոց ոչ պիտի բազմութիւն աբեղայից կամ սարկաւագաց , այլ սաղմոսողաց և ժամասացից ․ զոր կարեն կատարել և պքեմաւոր վանականք ։

Կանոն ․ Ը ։ Ծայրագոյն վարդապետք որք ունին զառաջնորդութիւն եպիսկոպոսարանաց , շնորհեմք նոցա ունել և զարտօնութիւն եպիսկոպոսաց՝ և լինել նոցա համապատիւ , նստել յաթոռ , և եպիսկոպոսական թագիւ պատարագել ։

Ապա այսուհետև մի՛ ումեք աբեղայի՝ և կամ մասնաւոր վարդապետի տուեալ լինիցի իշխանութիւն ծայրագոյն գաւազանի ․ այլ միայն նմին՝ որ կացուցանի առաջնորդ յեպիսկոպոսարանի , կամ յերևելի վանս ։

Իսկ աբեղայից՝ որք ուսեալ են զարհեստն քերականութեան , և ունին տեղեկութիւն աստուա-

շունչ գրոց հնոյն և նորոյս , և վարդապետական մատենից հարցն մերց , տացի նց մասնաւոր զաւազան և եթ՝ քարոզել և ուսուցանել 'ի ժողովուրդս :

Կանոն . Թ . Ոք եպս կամ եպս ո՛ և իցէ վիճակի , կամ նուիրակ մեր Էջմիածնի՝ կամ մեր Երուսաղէմի , 'ի գտանիլ ուրեք յաթոռանիստ եկեղեցւոջ այլոյ եպիսկոպոսարանի , մի՛ համարիցի 'ի յառաջացեալ աթոռն առաջնորդական . Թէ առաջնորդն երէց իցէ՝ կամ ծայրագոյն վարդապետ . թէ անդ եղեալ իցէ՝ կամ այլ ուրեք գնացեալ . զի է բանադատութի կանոնական իրաւանց , նստիլ յաթոռ առաջնորդական՝ ոչ լինելով առաջնորդ վիճակին . այլ նստիցի յաթոռ միւսոյ դասին , ցորչափ ժամանակս մնասցէ անդէն 'ի ժողովել զնուէրս ժողովրդեան :

Կանոն . Ժ . Ոք եպս ոք կամ եպս՝ աւելի քան զսահմանեալ թիւն մի՛ ձեռնադրեսցէ կուսակրօն քահանայ կամ սարկաւագ . և զոր ունի առ իւր՝ հոգ տարցի շահիլ զնա և պահել 'ի վիճակի իւրում : Ապա եթէ չկարիցէ շահիլ , և կամ վասն բանաւոր պատճառի թողուցու մեկնիլ , տացէ վկայական 'ի ձեռս նր երթալ բնակել յայլ ինչ մենաստան կամ 'ի վանս :

Իսկ եթէ աբեղայն կամ սարկաւագն առանց վկայականի 'ի բաց մեկնեսցի . և կամ

տալով զվկայականն՝ քաղաքէ ՚ի քաղաք անդաստականս դեգերեսցի · այնպիսին ուր ուրեք և գտանիցի, արգելցեն զնա եպսք կամ առաջնորդք ։ Եթէ ունիցի վկայական, առաջադրեսցեն նմա երթալ բնակել ՚ի վանս ինչ · և եթէ չունիցի, հարկեսցեն զնա դիմել առ մեծաւոր իւր, և հնազանդիլ նմա · առ որ դրեսցեն ընդունիլ զնա հայրաբար ։

Իսկ եթէ հեռաւորութի տեղւոյ, կամ խռովութի ճանապարհի, կամ տկարութի մարմնոյ, կամ այլ ինչ բան բաւական ՚ի միջի կայցէ, աղաչական գրով ընկալցի զներումն անհնազանդութե իւրոյ, և զգիր վկայական՝ երթալ յայլ մենաստան կամ ՚ի վանս ։

Ապա եթէ անլուր գտանիցի, և կամիցի ըստ հաճոյս անձին անդաստական թափառել · մի՛ բարձի թողի արասցեն զնա երթալ զհետ կամաց իւրոց, այլ գրեալ ծանուսցեն առ Պատրիարգարանն, զի ընկալցի այնպիսին զարժանաւոր հատուցումն ։

Կանոն · ԺԱ ։ Զկարգ վարկաւ սծագումար ժողովս, զի որք եպսք՝ և եպսք՝ և ծայրագոյն վարդապետ առաջնորդք՝ պատուէր տացեն ամ եկեղեցեաց որք են ընդ կառավարութե իւրեանց, ո՛չ բնաւ թոյլ տալ անծանօթի ումեք՝ որ ասէ զանձնէ լինել եպս՝ կամ վարդապետ՝ կամ քահանայ՝ վարդապետել յատենի, կամ քահանայագործել, կամ

տպաւորել, կամ ընթեռնուլ, եթէ ո՛չ ունիցի ՚ի ձեռնադրողէն հաստատուն վկայական ՚ի ձեռին . այլ թողուցուն նմա կալ արտաքոյ դասին , և աղօթել ընդ ժողովրդեան :

Կանոն . ԺԷ : Եթէ հակառակութի՟ ինչ կամ վէճ ծագեսցի ՚ի մէջ երկուց արք եպ՟սաց վասն ո՛ և իցէ պատճառի . և ունելով զհաւասար կարծիս՝ չկարիցեն լինել իրաւախոհ . երկոքին եւս անկեղծուբ՟ և առանց ինչ կրից գրեսցեն զիրսն առ Պատրիարքարանն , և յանձն արասցեն նմա իբրև վերնագոյն ատենի՝ որոշել և վճռել զդատ իւրեանց :

Ապա եթէ վէճն այն իցէ ՚ի մէջ երկուց եպ՟սաց նոյն աթոռոյ , արք եպ՟սն գաւառին իրաւախոհս արասցէ կամ որոշեսցէ :

Իսկ եթէ իցէ ՚ի մէջ եպ՟սաց այլ և այլ աթոռոց , երկուց գաւառաց արք եպ՟սք ՚ի մի եկեալ տնօրինեսցեն կամ որոշեսցեն :

Բայց եթէ դժուարութի՟ ինչ ընդ առաջ ելանիցէ , և վէճն մնասցէ անորոշ , յայնժամ նոքին արք եպ՟սքն գրեսցեն առ Պ՟տրիարքարանն զհանգամանս իրողութե՟ն . և ընկալեալ յատենէ նորա զվճիռն , ծանուսցեն եպ՟սաց . և այսու օրինակաւ դադարեցուցեալ զվէճն՝ բարձցեն զհակառակութիւն :

Կանոն . ԺԸ : Հաճոյ թուեցաւ հարց ժողովոյս , զի զայն ա՟մ իրողութի՟՝ զոր հարկաւոր է ծանուցանել առ Պ՟տրիարքական աթոռս ,

միայն գահերէց որք եպսք գրեալ ծանուցեն. նոյնպէս և զամ առաջարկութիս կամ զպատ-ուէրս Պտրիրգական աթոռոյս՝ նոքա հրա-տարակեսցեն եպսաց և առաջնորդաց եղելոց ընդ կառավարութբ իւրեանց .

Կանոն . Ժդ : Եպսք կամ առաջնորդք՝ ե-թէ ունիցին զտարակուսանս ինչ շուրջ զկա-նոնական իրողութբ , մի՛ իւրովի դատեսցեն երկբայական կարծեօք կամ խղճահարութբ . այլ վաղվաղակի գրեսցեն զայն առ որք եպս գաւառին իւրեանց , և ՚ի նմանէ ընկալցին զլուծումն : Զի որք եպսաց է մեկնել ըզ-միտս օրինաց , և տնօրինել զկանոնս ՚ի սահ-պել հարկին :

՚Ի վախճան կանոնացս՝ աղաչեմք զամ հո-վիւս և զվարդապետս բարւոք վերակացու-լինել հօտին , օրինակ զանձինս ընծայեցու-ցանելով՝ բանիւք , գնացիւք , սիրով , հաւա-տովք , սրբութբ : Քանզի գրէ սբ առա-քեալն Պօղոս , որք բարւոք վերակացու լի-նին երիցունք , կրկին պատուոյ արժանի ե-ղիցին . մանաւանդ որք ուսուցանեն բանիւ և վարդապետութեամբ :

Քաջայայտ է , զի եպսք և վարդապետք՝ երիցունք են յեկեղեցւոջն քի այ . եթէ զոր ուսուցանեն բանիւ խրատու ՚ի ժողովուրդս , ցուցցեն նաև վարդապետութբ գործոց յան-ձինս իւրեանց , ոչ կրկին պատուոյ՝ նոյնպէս

եւ կրկին վարձուց լինելին արժանաւոր։ Զի որպ մարմին՝ հոգւով է կենդանի. նոյնպէս եւ քարոզութ բանին կենաց՝ օրինակաւ բարի վարուց քարոզողին։ Այլ այ ասէ առաքեալն՝ զոր ընկալայք եւ լուայք եւ տեսէք յիս՝ զայն արարէք։

Զի եթէ ոչ ցուցանեն գործովք զոր ուսուցանեն բանիւ, ոչ բարւոք վերակացու լինելին հօտին. եւ զինչ տացեն պատասխանի հօտապետին՝ յորժամ պահանջիցէ զհամար պաշտաման իւրեանց՝ վասն ծուլութեան որ հպատակ կան նոցա իբրեւ այ տնտեսի. յոյր սակս պարտաւորէ առաքեալն ի հնազանդութի առաջնորդաց զժողովուրդ տն՝ ասելով, թէ տքնին նոքա վասն հոգւոց ձերոց, որպ զի համարս տալոց իցեն այ։

Հուսկ ապա պատուիրեմք եպսաց՝ առաջնորդաց՝ վարդապետաց՝ եւ ամ ժառանգաւորաց եկեղեցւոյ, կամակար սիրով հնազանդել բարեկարգ սահմանադրութեց ամենագումար ժողովոյս, եւ առանց զանցառութե ի գործ դնել. զի արդարեւ եթէ եկեղեցականք հպատակ լինիցին կանոնաց, անտարակոյս ուրեմն եւ ժողովուրդք ամ հպատակ լինելին իւրեանց։

Այլ որովհետեւ վախճան կանոնաց է օգուտն հասարակաց. ուստի եթէ ոք զօգուտ անձին իւրոյ առաւել ընտրեալ, ստունգանիցէ սահմանադրութեցս այսոցիկ, պարտաւոր առնէ զանձն դատաստանի եւ պատժոյ։

Ապա ա՟մ փութոյ պնդութե՟ հո՛գ տարջիք կատարել զա՟մ պատուիրեալս առ 'ի մէնջ․ և ընկալջիք զվարձս բարիս յ՟յ , և զփառս և զգովութիւն 'ի մարդկանէ ։

Շնորհք տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ընդ ամենեսին ընդ ձեզ․ ամէն ։

'Ի վախճան կանոնական սահմանադրութեանցս՝ իրաւունս համարեցաք ստորադրել իւրաքանչիւր ձեռամբ մերով․ ո՟պ զի և դուք որ տեսուչդ էք եկեղեցւոյն ք՟ի , իբրև ականատեսք լինելով իրացս , ընկալջիք մտադիւր զայսոսիկ , և պահիցէք հաստատուն ։

ա․ Գաբրիէլ արք ե՟պս և Պ՟տրիարգ ա՟ծա-
կոխ քաղաքին Ե՟մի ․
բ․ Կարապետ արք ե՟պս և Պ՟տրիարգ Թագա-
ւորեալ քաղաքին կոստանդնուպօլսոյ ։
գ․ Պօղոս ե՟պս նախկին Պատրիարգ կոս-
տանդնուպօլսոյ ։
դ․ Սարգիս ե՟պս նախկին փոխանորդ ս՟բյն
Պատրիարգի ա՟ծայնոյ քաղաքին Ե՟մի ։
ե․ Ա՟ծատուր ե՟պս՝ գանձանակաց վերակա-
ցու ս՟բյ աթոռոյն էջմիածնի ։
զ․ Յարութիւն վարդապետ փոխանորդ Տ՟ն
իմոյ ամենապատիւ և վեհափառ Պատ-
րիարգին ս՟բյ Է՟ջմի ․

Է. Պօղոս վարդապետ փոխանորդ Տ՟ն Խմյ ամենապատիւ և վեհափառ Պ՟տրկրգին կոստանդնուպօլսոյ ։

Ը. Դաւիթ վարդապետ քարտուղար Տ՟ն Խմյ ս՟բզն Պատրիարգին Եջմի ։

Թ. Մատթէոս վ՟րդպտ քարտուղար Տ՟ն Խ֊մյ ս՟բզն Պ՟տրկրգին կոստանդնուպօլսոյ։

Ժ. Զաքարիա վ՟րդպետ փոխանորդ Տ՟ն Խմյ Պետրոսի դերապատիւ և գահե֊րէց առաջնորդին տարօնոյ ։

ԺԱ. Անդրէաս վ՟րդպետ գրագիր Պատրիարք գահան աթոռոյն կոստանդնուպօլսոյ ։

ԺԲ. Մկրտիչ վարդապետ Նախկին առաջ֊նորդ քաղաքին քեօթահիոյ ։

ԺԳ. Յակոբ վարդապետ Լուսարար այք եպ՟սարանին կեսարիոյ ։

ԺԴ. Զաքարիա վ՟րդպետ քարոզիչ ս՟բ Ա՟ծա֊ծին և ս՟բ Եղիա եկեղեցեացն Էյուպի ։

ԺԵ. Գրիգոր վ՟րդպետ քարոզիչ ս՟բ Հրեշտա֊կապետ եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ։

ԺԶ. Յարութ՟ի վ՟րդպետ քարոզիչ Խնդրակա֊տար ս՟բ Ա՟ծածին եկեղեցւոյն օրթագիւղի։

ԺԷ. Յոհաննէս վ՟րդպետ քարոզիչ ս՟բ Նիկո֊ղայոս եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ ։

ԺԸ. Մատթէոս վ՟րդպետ քարոզիչ ս՟բ Լու֊սաւորիչ եկեղեցւոյն ղալաթիոյ ։

ԺԹ. Պետրոս վարդապետ ալթունեան՝ քա֊րոզիչ ս՟բ Գէորգ եկեղեցւոյն կոստանդ"։

ի. Գրիգոր վրդպետ քարոզիչ մ̃ր Յօհան-
նէս եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ։

իա. Եփրեմ վարդապետ քարոզիչ մ̃ր Կարա-
պետ եկեղեցւոյն իւսկիւտարու։

իբ. Յակոբ վարդապետ քարոզիչ մ̃ր Սան-
դուխտ եկեղեցւոյն Հիսարու, և մ̃րց
եկեղեցեացն ենիգիւղի և պէյկօզի։

իգ. Գրիգոր վարդապետ քարոզիչ մ̃ր Խաչ
եկեղեցւոյն գատիգիւղի։

իդ. Բարդուղիմէոս վարդապետ քարոզիչ մ̃ր
Երրորդութե̃ն եկեղեցւոյն պէկօղլուի։

իե. Թադէոս վարդապետ քարոզիչ մ̃ր Ստե-
փաննոս եկեղեցւոյն խասգիւղի։

իզ. Գրիգոր վրդպետ քարոզիչ մ̃ր Երրոր-
դութե̃ն եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ։

իէ. Աբրահամ վրդպտ քարոզիչ մ̃ր Ա̃ծածին
մայր եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ։

իը. Յոհան վարդապետ միաբան մ̃րյ աթո-
ռոյն Էջմ։

իթ. Յակոբ վարդապետ միաբան մ̃ր կարա-
պետի վանից կեսարիոյ։

լ. Մատթէոս վարդապետ միաբան սուրբ
դանիէլ վանից կեսարիոյ։